

ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՀԻՒԱՆ ԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Ա.— ԱԶՔԻՆ ԿԱԶՄԸ

Բուն նիւթին անցնելէ առաջ, անհրաժեշտ է կարճ և ամփոփ բացատրել թէ ո՞ր մասերն են գլխաւորապէս, որ դեր կը կատարեն տեսողութեան մէջ:

Այլքը ունի գրեթէ դուռդի ձև, քիչ մը սեղմուած հոսէն դէպի առաջ, և կաղմուած է (սկսելով դուրսէն և առջևէն դէպի ներս և ետև) հեռեկալ մասերէն.—

Եղջ երիկ կամ եղջերային Թաղանթ (*cornée*).— Գոգաւոր շքրջանակ մը, որ ունի 11—12 միլիմետր (հազարորդամետր) տրամագիծ, թափանցիկ է ապակիի նման, փայլուն է, բաւական հաստ է, մօտ 1 միլիմետր. ետևը կայ միջոց մը, որ լիցուն է ջուրի նման թափանցիկ հեղուկով մը՝ ջրափիւթով և կը կոչուի առաջախոց (*chambre antérieure*): Այդ խուցին ետևի պատը կը կազմէ Ծիածանային Թաղանթը կամ Ծիածանը, (*iris*) որ շրջանակաձև է, տարբեր անձերու քով տարբեր գոյն ունի, մութ շագանակագոյնէն մինչև բաց մոխրագոյն և բաց կապոյտ: Ծիածանային թաղանթին ճիշդ կեդրոնը կայ փոքր ու կլոր բացուածք մը, բիբը, որ կ'առաջնորդէ դէպի յետսախոց և դէպի ոսպը կամ սառնեմին (*crystallin*): Ծիածանային թաղանթին մէջ կը նշմարուին երկու զօտիներ, աւելի նեղը՝ դէպի բիբը, և աւելի լայնը՝ դէպի շրջագիծը: Ծիածանային թաղանթին շարունակութիւնը դէպի՝ ներս կը կազմէ Թարթիչական դնդերը (*muscle ciliaire*) որ կը բոլորուի սառնեմինի շուրջը և կապուած է անոր կեղևին հետ: Երբ այդ դնդերը կը կծկուի, սառնեմին կ'ուռի, իսկ երբ դնդերը կը թուլնայ, սառնեմին կը տափակնայ: Այդ թարթիչական դնդերը, Ծիածանային թաղանթը, ոսպը կը կազմեն յետսախուցի պատերը, որ լիցուած է թափանցիկ հեղուկով: Ծիածանային թաղանթին մէջ զետեղուած են բազմաթիւ երակներ, որոնք ծայրերէն կ'անցնին դէպի բիբը և բիբէն դէպի շրջագիծը և կազմելով միջօրէական դիծերը, մասնաւոր ու բնորոշ տեսք մը կուտան այդ թաղանթին: Ոսպին ետևը, աչքի դուռդին մեծ մասը լիցուած է մասնաւոր նիւթով մը, կիսովին թանձր և հեղուկ, որ կը կոչուի ալպակենի (*humour vitrée*) և իր ետևի մասերով անմիջական շփման մէջ է ցանցենի (*réline*) կոչուած թաղանթին հետ: Ցանցենիին ետևը անմիջապէս կպած է մկնեմին կամ անօթնորո թաղանթը (*choroïde*). աւելի ետևը կայ սպիտակուցային Թաղանթը կամ կարծրեմին (*sclérotique*) որ կը սկսի եղջերային թաղանթէն և անոր շարունակու-

Թիւնք կը կազմէ և կը ներկայացնէ բուսական դիմացկուն և ամուր պարկ մը, որ ետեի կողմէն հասարակածային գիծէն ցած և զէպի ներս ունի բացուածք մը սեստոլուսիան ջիլլին համար: Այս ջիլը կը մտնէ այդ բացուածքէն ներս, աչքին մէջ, անցնելով մզննելի և ցանցնելի համապատասխան բացուածքներէն:



ԱՅՐԸ՝ կարուած վերէն վար

Տեսողութեան ջիլը իր բազմաճաղար բարակ թելերով կը բացուի ցանցնելին մէջ և կը պայմանաւորէ սեստոլուսիան յտակ և բարձր աստիճանը: Գիտնականները մանրադիտակով այդ թելերը գննած ատեն՝ գտած են անոնց մէջ մեծ քանակութեամբ երկու տեսակ բջիջներ, զորս նմանցուցած են փայտիկներու և արկղիկներու (balonnets et cônes): Փայտիկներուն թիւը կը հասնի 30 միլիոնի, իսկ արկղիկներունը՝ 3 միլիոնի: Ասոնք կը հաւաքեն լոյսի ճառագայթները՝ շնորհիւ իրենց մէջ գտնուած կարմրագոյն հիթին, որ լոյսի ազդեցութեան տակ կը գունատուի և կը փոխազդեն իրենց սպառտութիւնները ուղեղին սեստոլուսիան կեդրոնին: Աչքը տեսակ մը լուսանկարչական գործիք է: Լուսանկարչական գործիքի մը առաջի մասը կը կազմէ խոշորացոյց մը, իսկ ետեի մասը՝ մութ պատերով արկղը: Լոյսի ճառագայթները թափանցելով խոշորացոյցին մէջ, կը բեկանուին և կը կեդրոնանան որոշ տարածութեան վրայ, ուր և կը նկարուի առեւալ առարկային պատկերը հակառակ ձևով, վերեի և աջ կողմի մասերով զէպի վար և ձախ կողմը: Լոյսէն ազդուող ապակի կամ իմֆ լմը գնելով լոյսի եւրա-ճառագայ թն կեդրոն

նացած տեղը (վառարան, foyer) կը տպուկ նկարը, որ ի յայտ կը բերուի քիմիական քանի մը խառնուրդներով:

Աչքը խոշորացոյցի փոխարէն ունի քանի մը բեկանող թաղանթներ և շրջաններ, այսինքն եղջերայիներ, առջևի խուցին հեղուկը, ոսպը և ապակեմման մարմինը, որոնք կը բեկանեն ճառագայթները և կը կեդրոնացնեն, բնականոն աչքին մէջ, ճիշդ ցանցենիին թաղանթին վրայ, փայտիկներու և արկղիկներու մէջ: Ասոնք կը փոխադրեն, նուրբ թելերու միջոցով, այդ տպաւորութիւնը ուղեղի տեսողութեան կեդրոնին, և ան ալ առանձին թելերով կ'արթնցնէ գիտակցութեան կեդրոնը և մարդը կամ կենդանին կը պատկերացնէ ճշգրտօրէն այն առարկան, որ արձակած է աչքին մէջ թափանցած լոյսի ճառագայթները:

ԲԺ. Ե. ՏԷՐ ԴԱԻԹԱՆ

Ա Ր Ի Ի Ն Ը

Է.

ԱՐԵԱՆ ԵՆՐՏԻԿՆԵՐԸ

Արեան Ենրտիկները — կամ Բիցօցերօի շերտիկները—արեան մէջ գտնուող կազմակառուցող տարրերէն ամէնէն փոքրերն են: Ասոնք կազմուածքի մէջ հոսող արեան մէջ, կլոր չեն ինչպէս կարմիր և ճերմակ գնդիկները, այլ ցուպի ձևով, վերին աստիճանի թափանցիկ, 2 - 3 միկրոն երկարութեամբ: Երբ արիւնը մարմնէն գուրս հոսի, անմիջապէս կը ստանան կլոր գնդիկի ձևեր և կարճ ժամանակէն բոլորովին կը խառնուին մակրոզած արեան նեարդերուն հետ: Անոնց թիւը մէկ խորանարդ միլիմետրի մէջ, հաւասար է 250,000ի, 5,000,000 կարմիր և 8,000 ճերմակ գնդիկի դէմ:

Բայց այդ թիւը ենթակայ է խոշոր փոփոխութիւններու: Հաւանական է որ անօթութիւնը կը պակսեցնէ, իսկ առատ ճաշ մը կ'աւելցնէ անոնց քանակը: Վարակիչ հիւանդութիւններու ընթացքին արեան շերտիկներուն թիւը կ'աւելնայ, (Թոքատապի, կարմրուկի, քութէշի, օձացաւի (Erysipèle). տիւպերկիւլոզի, քաղցկեղի ընթացքին). բացառութիւն կը կազմէ ժանտառնոզը:

Միևնոյն երևոյթը կը նկատուի առատ արիւնահոսումներէն յետոյ: Շարք մը արեան հիւանդութիւններու ընթացքին, որոնց յատկանիշն է թէ ներքին և թէ արտաքին առատ արիւնահոսումները, շերտիկները թէ քանակի, թէ ձևի և թէ մեծութեամբ յատկանշական փոփոխութիւններ կը կրեն:

Մինչև այժմ դեռ լուսաբանուած է, թէ ուր կը կազմուին շերտիկները: Բայց հաստատուած է որ անոնք ինքնուրոյն մասնիկներ են, ոչ մէկ կապ չունին կարմիր և ճերմակ գնդիկներու հետ: Շատ